

Ն. ՅԱ. ՄԱՌԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի բանգարանում պահվում են սովետական ականավոր դիտնական, բանասիր-հնագետ, ակադեմիկոս Ն. Յա. Մառի գրած 100-ից ավելի նամակներ՝ ուղղված ժամանակի նշանավոր մի շարք հայագետների: Այդ նամակներն ընդգրկում են 1892—1910 թթ., գրված են հայերեն և ռուսերեն լեզուներով և շոշափում են հայ մշակույթին վերաբերող բազմաթիվ հարցեր: Մենք նպատակահարմար գտանք և ռանձնացնել նամակներն ըստ թեմաների. յոթ նամակ, որոնք ուղղված են Մ. Բարխուդարյանին և շոշափում են Պետերբուրգի գրաքննչական հարցերը, տպագրել ենք «Հանդես»-ի 1963 թ. № 4-ում: Անտիպ մնացած նամակների ճնշող մեծամասնության մեջ քննության են առնված հնագիտական-պատմական մի շարք խնդիրներ: Իրենցից կարևոր ենք համարում ընթերցողին հանձնել ես 7 նամակ (3-ը՝ ռուսերեն, 4-ը՝ հայերեն), մնացածը թողնելով հետազային:

Մի քանի խոսք նամակների մասին:

Ն. Յա. Մառն իր գիտական գործունեությունը գերադանցապես նվիրել է հնագիտության, լեզվի ու պատմության հարցերի ուսումնասիրությանը: Հատկապես ուշադրով են Անի քաղաքում նրա կատարած պեղումները, որոնք մեծ նշանակություն են ունեցել հայոց պատմության, մասնավորապես բազրատունյաց թագավորության և նրա մայրաքաղաք Անիի պատմության և մշակույթի հետ կապված մի շարք հարցերի լուսաբանության գործում:

Մեծ սնունդ գիտնականն Անիի պեղումները սկսել է դեռևս 1892—1893 թթ., ապա վերսկսելով 1904 թ. շարունակել է մինչև 1916 թ.: Պեղումների արդյունքների մասին նա հետաքրքիր դասախոսություններ է կարդացել Պետերբուրգում, Մոսկվայում, Թիֆլիսում, հատուկ հրավերով նաև Բաքվում: Բազմապատակ գիտնական Ե. Շահադիդի հրավեր-նամակով Մառն իր գեկուցումը մեծ սիրով կրկնել է նաև Նոր Նախիջևանցիների համար և իր աշակերտ Հ. Օրբելու հետ միասին այցելել է Մ. Նալբանդյանի, Ի. Պատկանյանի և Ալամդարյանի գերեզմանները, դիտել տեղի պատմական հնությունները:

Մառն իր հնագիտական հետազոտությունները չի սահմանափակել Անիով, նա եղել է Հայաստանի տարբեր վայրերում, հավաքել բազմաթիվ արձանագրություններ, համեմատել, ճշտել, լուսանկարել դրանք, գտել է նորանոր հուշարձաններ՝ կամուրջներ, ջրանցքներ, պալատներ և այլն:

Անիում կատարած պեղումների մասին Ն. Մառը տպագրել է մի շարք աշխատանքներ՝ հաշվետվությունների, բրոշյուրների և հոդվածների ձևով, դրանց թվում՝ «Անին իբրև հին Հայաստանի մայրաքաղաք» (1898), «Պեղումներ Անիում» (1904), «Պալատական եկեղեցու նկարագրությունը» (1916), «Անվո պեղումներից գտնված հին իրերի և Անվո մատենադարանի գրքերի ցուցակը» (1916): Անիում կատարված պեղումների արդյունքները ամփոփվեցին «Ани, книжная история города, раскопки на месте городища» աշխատության մեջ:

Նամակներում հետաքրքիր տեղեկություններ և մեկնաբանություններ կան Մ. Խորենացու «Պատմություն հայոց» գրքի մասին, առանձին բառերի, ժողովրդական բանահյուսության, լեզվական փոխառությունների, տաղաչափության, ինչպես նաև գրականության պատմության հարցերի շուրջը:

Հայերեն նամակները գրված են կիսաարևելահայ լեզվով, խառը գրաբարյան հղովական վերջավորություններով: Այդ նամակները տպագրում ենք անփոփոխ, պահպանելով նրանց լեզվական և ոճական առանձնահատկությունները:

Նամակները պահպանվում են Գ. Լևոնյանի (№ 1), Գր. Խալաթյանի (№№ 2—3), Խ. Հովհաննիսյանի (№ 4), Լևոյի (№ 5) և Ե. Շահադիդի (№№ 6—7) ֆոնդերում:

Պ. Ն. ՍԻՄՈՆՅԱՆ

ቀ ሁ ስ ስ ሁ ቅ ሳ ቅ ሄ ሆ

N f

Uwru 2. 1892

11
117f.92. 23

ՄԵԺԱԿԱՌԻՎ ԿՐ. ԵՐԻՑՅԱՆ՝

Ուղարկելով ձեզ այդ հոդվածիս² վերջավորությունը, թեև եմ տալիս մյուս անգամ նեղացնել ձեզ թախանձանոր՝ հուսով, որ հիմա գոնյա անպատասխան չեք թողնիլ նամակս. այս անգամ բան այն է, որ ես եկող ամառը մտադիր եմ Ռուսահայաստանում պտույտ մը ընել³, իմասնավորի Ախուրյանի և Զանգի մեջ գտնվող հայկական հնությունները լավ հետազոտել արձանագիրները, որոնք հավաքված են, իսկականներին հետ համեմատել և տեղ-տեղ, մանավանդ Անիում, ուր ամբողջ ամիս եմ մնալու, պեղումներ անելու։ Իհարկե սենյակի մեջ դրքերի հետ ժամանակ անցկացնելուց հետո ուղղակի հնագիտական և մասնավանդ պեղումների գործին ձեռնամուխ լինել հանդգնություն մը կհամարվի, բայց այս տարի ճանապարհորդությունս պեղումների հետ նախապատրաստական բան մը, փորձ մը կլինի և միայն ծանոթացնե ինձ տեղական պայմանների և գործի դրություն հետ անշուշտ այդ էլ մի որոշ՝ սահմանափակ շրջանում. սակայն ես համարձակություն ունիմ կարծելու, որ մինչև անգամ այս առաջին փորձս արդյունավոր դուրս կգա, եթե օգնեք ինձ ձեր փորձառությամբ և չզանաբ ձեր հարուստ պաշարքից մաս մը հիշված շրջանի ավերակներին և հնություններին վերաբերող ինձ հաղորդեք թե դրով թե բերանացի տեղեկությամբ, երբ Տփլիս անցկացնելիս մայիսի 1—15 պատիվ կունենամ ձեզ հետ խոսակցությամբ վայելելու. առանձին արժեք ունին ինձ համար այն տեղեկությունները, որոնք վերաբերում են «պեղումների կարոտ» տեղերի։ Գրականության հետ ծանոթ եմ և գրեթե ամեն բան ձեռքումս է, միայն ձեր՝ Կարսի նահանգի վերաբերող երկր չկարողացա ձեռք բերել։ Ուրեմն ցտեսություն. ես գոնյա անհամբեր եմ սպասում պատասխանիդ։

Հարգանք առ ՉԷ-ի
Ն. ԼՄԱՌ

Հասցեն—СПБ. Разъезжая, № 46. кв. 6.

A 2

27 апреля 1893 г.

Многоуважаемый
Григорий Абрамович!

Благодарю за высылку заметки и пользуюсь случаем, чтобы поговорить с Вами об одном месте у М. Хор(енского), составляющем предмет изысканий между прочим и в настоящей Вашей заметке. Вы м(ожет) б(ыть) догадываетесь, что дело касается «*ἡ ἡμετέρα*»⁵ и *ἡ ἡμετέρα*, давно занимающего и меня. Я, признаюсь, отношусь скептически к толкованию данного м. посредством перевода темных слов теми или другими трав-

ми, и скептицизм не оставляет меня и по прочтении Вашего чрезвычайно остроумного объяснения, впервые осмыслившего перевод тех, которые известные темные слова переводили или толковали в смысле трав. Повторяю, по моему, если в темных словах имеем действительно названия трав, то единственное спасение в Вашем объяснении, вводящем в этот поэтический отрывок заманчивый романтический элемент, но так ли? Я сомневаюсь: я сомневаюсь именно в том, чтобы *qwrwsh/rwr* следовало понимать в смысле персидского слова, название травы, а затем сомневаюсь, чтобы вообще какое-либо слово в данном отрывке имело значение травы, хотя независимо от нашего текста подобное значение (для *rwrwsh* по крайней мере) может быть установлено. Я надеюсь при личном свидании поговорить об этом подробно, хотя предупреждаю у меня так же нет неоспоримого решения данного места, а лишь гадательное, теперь же обращаюсь к Вам с двумя вопросами, ответы на которые я рад бы получить от Вас:

а) ведь перс(идское) название травы можно признать в *qwrwsh/rwr* если *q* не считать приставным, между тем именно с приставкой и имеем дело.

Q + *wrwsh/rwr* *rwrwsh(rw)*

и Q — *wrg* *rwrwshdr*

Могло случиться, чтобы второе дополнение стояло без *q*, но раз при втором имеется, то и *q* при первом дополнении нельзя не признать приставочной частицей.

в) Какое отношение наш отрывок имеет к истории о Тигране и Аждахеке, в подтверждение которой он и приведен Хоренским. Предполагая, что Сатеник хотела влюбить в себя Аргавана, мы понять не сможем, каким образом *rwrwsh/rwr qwrw* (все, что предшествует) *hwrwsh/rwr* и *rwrwsh/rwr* *hwrwsh/rwr*?

Уважающий Вас

Н. Марр.

P. S. Высылаю Вам заметку о Буте и Хрестоматию, составленную для моих слушателей; при всем желании не удалось избежать опечаток, иногда невесть как; словарь мною не проверен по отпечатанию и не знаю, упущены ли слова: если упущения окажутся, то буду благодарен за указание. Список рук. Сев[анского] мон[астыря], надеюсь, доставлен Вам уже в прошлом году.

Н. М.

№ 3

9 мая 1833 г. СПб

Многоуважаемый

Григорий Абрамович!

Я собираюсь выехать 11—12 мая (11-го у меня экзамен); рукопись поспешите доставить в цензурн(ый) комитет так, чтобы до 10 мая успели передать мне. Я прочту ее в пути, иначе дело затянется, так как про-

путешествует из Петерб(урга) в Ани и обратно в ПБ. Взять же мне прямо из Ваших рук без посредства комитета невозможно⁷.

Ո տենչալ... Я не был понят в вопросе об отношении этого отрывка к Тиграну. Я все же продолжаю: какое отношение данного отрывка (а в связи с ним, конечно, других поэтич. отрывков у М. Х.) к истории о Тигране? Об этом при свидании. Что касается զարտախոր (вместо) զզարտախոր, не могу согласиться, потому что в автогр(афе) М. Хоренского форма զզարտախոր не должна была быть, хотя, как совершенно справедливо замечаете Вы, переписчики, если первоначально имелась бы она, могли «исправить» в զարտախոր. Не должна была быть форма զզարտախոր, так как с ней расстраивается семисложный размер отрывка.

տեն	չալ	Սա	թե	նիկ	տի	կին	?
տեն	չանս	ըզ	զար	տա	խոր	խա	ւարտ

Введение զ (ըզ) не только нарушает силлабизм (это ничего, ибо можно было бы утверждать, что в первом стихе недостает одного слога, но нарушает ритм, и это существенное.

տեն	չալ	Սա	թե	նիկ	տի	կին
տեն	չալ	նըս	ըզ	զար	տա	խոր
խաւ	արա	և	զտից	խա	ւար	ծի
ի	րար	ծիցն	Ար	զա	ւա	նալ

տեն	չա	նըս	ըզ	զար	տա	խոր
խաւ	արտ	և	զտից	խա	ւար	ծիլ
ի	րար	ծիցն	Ար	զա	ւա	նալ

Уважающий Вас

Н. Марр.

№ 4

17 декабря 1897 г.

Васильевский остров, 8-я линия, д. 19, кв. 24

Многоуважаемый

Христофор Иванович!¹⁸

Спасибо за перевод Вашего труда Никольского⁹. Прочел Ваши соображения в конце перевода о Хоренском¹⁰, они, конечно, эти сомнения должны быть разрешены, но если принять, что Хоренский был фальсификатор искусный, то тогда возбуждаемые Вами вопросы, которые, конечно, всем приходят в голову, сами собою отпадают, так как Вам скажут, что а) Хоренский симулировал древность, притворялся незнающим той современности, за два-три столетия старше которой он себя выдает, в) Хоренский притворялся равнодушным к греко-армянским церковным распрям, притворялся неведающим ничего о Халкедонском соборе и вызванном этим собором охлаждении армян к грекам, дабы не выдать себя современником тех событий, которые отличали его подлинное время и т. п. Так скажут Вам защитники новых взглядов Хоренского. Кроме то-

го, я лично нахожу, что с этими возражениями не надо спешить: разве VII—VIII век армянской жизни нам так хорошо известен, что мы можем с уверенностью утверждать об единой противохалкедонской атмосфере в арм. умственной жизни; аргюи можно сказать, что были ярые противники греческого исповедания, значит были в Армении люди противного мнения, и Хоренский мог быть одним из них. Касательно отсутствия арабского влияния, вот Вам пример: повесть Варлаам и Иоасаф в опровержении ложных учений игнорирует совсем мусульманство, хотя греческая ее редакция едва ли раньше X—XI в. И наконец, разве пока можно утверждать, что в Истории Хоренского мы имеем слог V века; быть может наоборот, в нем слог, характерный слог VII—VIII века, а слог V века надо судить по иным памятникам. Что касается влияния арабов, то в чем можно усмотреть арабизмы хотя бы у Иоанна католика¹¹ (конечно, в слог, а не в фактах), а он писал еще позже VIII века, когда язык мог быть и должен был быть еще чище, еще лучше. Значит, я принимаю выводы новейшей критики? Нисколько. Я остаюсь при том же мнении, какое высказываю в статье об Анониме. Скоро приступают к печатанию моей рецензии на книгу Григ(ория) Абрамовича (она уже сдана в ред. Визант. Времен.) и там будет яснее еще мое отношение к отрицательной критике. На днях получите (быть может на будущей неделе) две мои заметки, одна — разбор работы Миабана¹².... Горня и Шмона. За сообщение о надписи благодарю: при издании работы об Ани придется справиться, на каком это собственно следы (?). Был у меня вчера бар. Штакельберг¹³, но не застал и адреса не оставил. В Петербурге же, говорят, Ваш новый директор. Инспектором, говорят, будет Гр(игорий) Абрамович, правда ли? От него давно без писем.

С уважением к Вам

Н. Марр.

№ 5

06. 4. 1. Ս. Պ. Բ. Գ.

Մեծարդո տեր¹⁴

Ձեր նամակից իմացա, որ հիվանդ եք եղել և շատ ցավ պատճառեց տեղեկությունը. փառք աստծո որ լավացել եք: Ձեր համակրության համար շնորհակալություն հայտնել ավելորդ բան է, բանի որ զգում եմ, որ խոր և սրտանց հայրենասիրական զգացումդ է ձեզ ստիպում արժեքս մի քիչ շափից դուրս մեծացնել: Ցանկանում եմ ամեն տեսակ հաջողություն ձեր մտադրությունդ (Անիի համար մի հասարակություն կազմակերպել) իրագործելու մեջ: Խորհուրդներս երբեք չեմ զլանա ձեզ հաղորդելու, բայց միակ իմ խորհուրդս այս բանի մասին այն է, որ մի վստահելի և մնայուն գործունյա մասնաժողով կազմակերպի Անիի ավերակների հոգս տանելու և նրա ուսումնասիրության, պեղումների և այլն աջակցելու համար: Գլխավոր բան այն է, որ սկսված գործը չպետք է դադրի. թող դանդաղ քել, բայց էի առաջ զնա: Իհարկե ես ամեն տեսակ կուզենայի օգնել և որքան կարողանամ կօգնեմ թե գործով թե (բանիվ) խոսքով. սակայն իրեն լոկ աշխատակից: Հավատացեք որ շատ և շատ կարևոր աշխատություններս հետաձգում եմ և գուցե Անիի ուսումնասիրության գործը կա-

բողանային և ուրիշներ առաջ տանել: Մայիսին կուգամ և անձամբ կգրիցենք: Զատկի հինգշաբթին դասախոսություն եմ կարդում (История Ани и раскопки на месте городища):

Գրեթե վաթսուն նկար պատրաստել են տվել երեկոյթին սարքողներ մոգական լապտերի համար¹⁵:

Մեծ ախորժակով չեմ սպասում այն օրին, վստահ չեմ, բնավ չեմ վստահում որ հասարակությունն ինձ հասկանա: Բարեկամներս խորհուրդ են տալիս դասախոսություն կրկնեմ Տփլիսում. բայց արդյոք ժամանակ հարմա՞ր է: Ինձ անպատշաճ է երևում, ի նկատի ունենալով, որ մեկ կողմից իմ մասնագիտության հետևողներ շատ քիչ են և մյուս կողմից այսքան հրատապ հարցեր են զբաղեցնում Կովկասի հասարակությունը: Արթա[յ] ունի մասին էլի նոր նյութ է հայտնվել:

Ց ապր[իլի] ես չեմ ղրկել նամակս հիմի նամակիս հետ ղրկում եմ դասախոսությանս ծրագիրը. դ[ասախոսություն]ս կարդացի և շնայելով ծափահարությանց և այլն շարունակում եմ կարծել որ ինձ չեն հասկացել: Մի քիչ ծանր էր ունկնդիրների համար դ[ասախոսու]թյան երկարությունը— 3 ժամ 15 րոպե բարեկամներս հիմի ավելի համառությամբ խնդրում են դ[ասախոսություն]սս ոչ միայն Թիֆլիս, այլ և Բաքվում կրկնեմ: Բայց կարծիքս չի փոխվում:

Խորին հարգանք առ Ձեզ
Ն. ՄԱՌ

№ 6

03.2.19.
СПБ. В. О. 4 л. л. 7. кв. 14.

Մեծապատիվ Տեր¹⁶

Պայմաններս հայտնի են՝ ինձ միայն ճանապարհածախս երկրորդ կարգով և platzkart-ով և Նախիջ[ևվանի]¹⁷ հյուրանոցի մի սենյակով, իսկ զուտ եկամուտը Անիի պեղումներին կամ Անիի նոր թանգարանի շինության. վերջինս ամենակարևոր բան է ներկա դրության մեջ:

Բայց ժամանակ, որտեղից առնեմ այս ժամանակը: Բարեկենդանին հաղիվ հազ կարող եմ Մոսկվայի այց կատարել: Ամառ միշտ շտապում եմ կամ դնալիս կամ դառնալիս: Զատիկ հարմա՞ր կլինի արդյոք, ե՞րբ՝ պասին թե պասից հետո: Բան մը մնում է, այս էլ պայմաններիցս է. հարկավոր լավ լապտեր մոգական և հարկավոր պատրաստությունները (լույս, էկրան և այլն և այլն). սլատկերներ պատրաստի ունիմ: Եթե պայմաններս ձեռնտու են, հարց մը կզնեմ. խնդրում եմ շիտակ պատասխան արդյոք հասարակություն պատրաստ է լսելու, նրա պատրաստություն և համբերություն ի շար ղրված չլինի եթե հինգ-վեց դասախոս[ությունները] կարգամ երկու օր և բոլոր դասախոս[ությունները] դիտական բովանդակությունից չմերկացնեմ, ինչպես Բաքու քաղաքում, կամ բավական է երեք դասախ[ոսություն] մի երեկոյան, ինչպես Մոսկվայում կամ երեք ժամ էլ շատ է Նախիջևանցիներիդ՝ համար, համառոտ բան մը սարքել. վերջինս ինձ դժվար կլինի:

Հարգանք առ Ձեզ Ն. ՄԱՌ

Մեծարգո բարեկամ

պր. Առաքել¹⁸

Ձեք կարող երևակայել, ինչ «դժվար դրություն» և բնկած տրամադրության ժամանակը հասավ ինձ ձեր հուսադրող նամակդ. ինձ երևում է, որ հայերը միանգամից սառչել են դեպի Անի և նրա մեջ կատարվող աշխատությունները. շատ լավ է, որ խոստացվում է պր. Արամյանի¹⁹ կողմից, որ այս տարի նվիրեց 1500 ռուբլի (չբավեց մեր հրատարակություններին, տպվել են տեսարաններ (16 լուսատիպ) ուղեցույց և հնադարանի Ա բաժանմունքի ցուցակը, դասախոսություններս դեռ չեն տպված և նրանցով չեմ էլ ուզում ծանրարևոտներ Անիի թույլ և նվազագույն բյուջե (կաշխատեմ համալսարանի միջոցով հրատարակել):

Այս տարվա պեղումները զուտ անիական են (Գառնիի մասին չէ խոսքս. վերջացրել եմ գրեթե և արժե տեսնել. կարող եմ ասել նրա զուգակից չկա). կամաց կամաց հողի տակից ելնում են Անիի զանազան շրջանի շերտերը: Մանրամասնությանը մասին չեմ գրի. հիանալի է ջրանցքը իրան առանձին սիստեմով սարքված փողրանքներով. բուն փողոցը գրեթե վերջացած կլինի, ավելի ճիշտ ասեմ, բոլորովին վերջացած կլինեն երկու շարքից հետո, եթե «բան» և բախդ չղարձեն ինձանից երեսը. պեղումներս կտեսնեմ միայն մի շաբաթ* և այն էլ շատ սակավաթիվ բանվորների ձեռքով. միջոցներս հատվում են, հնադարյանի Բ-րդ բաժանմունքում դարակներ պիտի շինեի, փողեր չկան և կարգի չենք կարող բերել թանկագին ճարտարապետական մասերը և ցուցակ պատրաստելու: Հնադարանի Ա-րդ բաժանմունքում շկաֆներ պիտի պատրաստեիք, հազարներ տեսակ տեսակ կավեշեն ամանների կտորներից պահում են առանց դարակների: պաշարք օրեցօր ավելանում է, միայն սնդիկամանների համարներ հարյուրներից անցավ, նոցանից 20-ից ավել են սաղ օրինակներ, իսկ կտորներ «ամենահազվագյուտ» և «ուսանելի»: մի շկաֆ լցվեց և ավելացավ. բայց փող չկա. ամերիկացի հնագետները մեզ շատ կարևոր գործիքներ նվիրեցին կայսերական հնագիտական կոմիսիայի միջոցով, ի միջի այլոց դարբնոցի անհրաժեշտ մասերը, որ շատ հարկավոր են մեզ. ուզում էինք սարքել դարբնոց փող չկա, այս ամերիկացիներից ստացված իրեղենները պահելու համար հարմար տեղ չունինք, ուզում էինք մի բան շինել, փող չկա... և էլի շատ և շատ կարիքներ: Երևակայեցեք, ես ինքս իմ սեփական ձեռքով գրված նամակով դիմում եմ արել և կյանքումս առաջին անգամ, նույնիսկ պատասխանին չեմ արժանացել: Եվ չնայելով այս բանին, փորձեմ էլի քաշել լուծս... Կարող դուռն բացվեց և մոտը հետաքրքիր. արձանագրությամբ խաչքարի պատվանդան:

Ձերդ ն. ՄԱՌ-

Ձեր նամակին լրիվ չեմ պատասխանում. ասեմ որ հասարակությունը գրավելու ևս էլ շատ կարևոր եմ համարում:

* Հետո քիչ մը, մինչև 21 օգոստոս, պարապելու կմնամ այստեղ: Գործերս և առանց պեղումների շատ են:

Ծ Ա Ն Ո Թ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1. Նամակն ուղղված է Ադ. Խրիցյանին (1840—1902).— Կովկասագետ, հնագետ, պատմա-
րան, ունեցել է բեղմնավոր գիտական գործունեություն, աշխատակցել է տեղի հայ և ռուս մա-
մուլին։ Նրա լավագույն հոդվածներն ու աշխատությունները մեծ մասամբ տպագրվել են «Փորձ»-
ում, «Արձագանք»-ում, որոնց մշտական աշխատակիցն է եղել մինչև նրանց ղաղափոխությունը։ Նրա
գրքերից հայտնի են՝ «Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում» եր-
կու հատորով, 1899, Թիֆլիս, «Ներսիսյան դպրոցի պատմությունը», Ա. մաս, 1899, Թիֆլիս և
այլ գրքեր։

2. Խոսքը վերաբերում է «Из поездки в Армению» գրվածքին։

3. Մառն առաջին անգամ Հայաստան է եկել 1890 թ., գրել է «Ամառնային ուղևորություննե-
րից դեպի Հայաս» (քաղվածքներ հայկական ձեռագրերից) գիրքը, որը ռուսերենից հայերեն թարգ-
մանել է Ոնոփրիոս Անուիյանը, 1892, Վիեննա։ Անիում առաջին անգամ պեղումներ անելու փորձ
կատարել է 1893 թ. ամռանը։ Այնուհետև վերսկսել է 1904 թ. և շարունակել մինչև 1916 թ.։

4. Նամակն ուղղված է Դրիգոր Խալաթյանին (1858—1912).— հայագետ, ծնվել է Ալեքսան-
դրապոլում. սովորել և ավարտել է Հաղարյան ճեմարանը, ուր և հետագայում եղել է հայագիտու-
թյան պրոֆեսոր։ Ունի բազմաթիվ գիտական աշխատություններ, որոնցից հայտնի են՝ «Մովսես
Նորենացու «Հայոց պատմության» խորեն Ստեփաննի թարգմանության քննադատությունը», 1890,
Ս. Պետերբուրգ, «Մովսես խորենացու աղբյուրների մասին քննադատական ուսումնասիրությու-
նը», 1898, Վիեննա, «Армянские Аршакиды в истории Армении Монсея Хоренского»,
1903, Նույնը հայերեն թարգմանությամբ լույս է տեսել 1906, «Հաղար Փարպեցի գործք նորին»,
1883, «Զենոր Դլակ համեմատական ուսումնասիրություն», 1893, Վիեննա, «Նդիշեի Վարդանանց
պատմության քննադատությունը», 1892, Թիֆլիս և այլ գործեր։

5. Խոսքը վերաբերում է Մովսես Խորենացու «Պատմություն հայոց»-ի 1827 թ. Վիեննայում
տպված գրքի 125-էջում հիշատակված «այլ և, տենչայ, ասեն Սաթենիկ տիկին տենչանս՝ զարտա-
կուր խաւարտ և զտից խաւարծի ի բարձիցն Արդաւանայ» հատվածին և խորեն Ստեփաննի
թարգմանությանը «Սաթենիկ տիկինը փափագելով փափագում էր զարտախուրին, խաւարտին,
տիցին և խաւարծին Արդաւանի բարձիցն»։ Այս հարցի պարզաբանմանը անդրադարձել է նաև
Դր. Խալաթյանը նույն գրքերի մասին գրած իր քննադատականում, որից մի օրինակ հեղինակի
ուղղումներով և մակագրությամբ պահվում է գրականության և արվեստի թանգարանի գրադա-
րանում։ Խորեն Ստեփաննի Ա. 171 ծանոթագրության մեջ գրված է՝ «Այս հատվածը գայթակղու-
թյան քար էր և էր ուր ուսումնական հայերի համար, որովհետև այստեղ այնպիսի բաներ կան,
որոնք գործ են ածված միայն այս մի հատվածում և ուրիշ հայ մատենագիրների մեջ չկան և
նրանց նշանակությունը մեկնելու գրեթե ոչինչ հնարավոր չկա» (էջ 311)։ Հարցի լուսաբանման
համար մեջ են բերված նաև հայ և օտար հայագետների և թարգմանիչների՝ Մկ. էմինի, Գալուստ
Տեր-Մկրտչյանի, Ֆլորիվարի, Ֆրանսիական և իտալական թարգմանիչների կարծիքները։

6. Խոսքը վերաբերում է նույն գրքի էջ 124-ում տպված «յայտենն զայս ճշմարտապէս և
թուլիւացն երգք» դարձվածքին, որի մանրամասն բացատրությունները տրված են գրքի Ա. 169
ծանոթագրության մեջ։

7. Ինչպես գիտենք, Մառը եղել է դրաքննաչական կոմիտեի արևելյան բաժանմունքի աշխա-
տակից, այդ կապակցությամբ Դր. Խալաթյանն իր աշխատանքը հանձնել է նրան պաշտոնական
թույլտվություն ստանալու համար։ Զեռագիրը նայելուց հետո հանձնել է կոմիտեին, որտեղից և
պետք է հտ ստանար հեղինակը։ Մենք չկարողացանք պարզել, թե խոսքը որ աշխատանքի մասին
էր։

8. Նամակն ուղղված է Խաչատուր Հովհաննիսյանին (1853—1920).— հայագետ, մանկա-
վարժ։ 1863 թ. բնդունվել է Հաղարյան ճեմարանը, որն ավարտել է 1872 թ.։ Այնուհետև բնդուն-
վել է Մոսկվայի համալսարանի արևելագիտության բաժինը։ 1875 թ. որպես առաջադեմ ուսանող
գործուղվել է Պետերբուրգ սանսկրիտերեն սովորելու։ 1879 թ. հանձնել է թեկնածուական քննու-
թյուն և ստացել ուսուցչի իրավունք։ 1881 թ. դարձել է մագիստրոս։ Նույն թվականից էլ աշխա-
տել է Հաղարյան ճեմարանում որպես հայոց լեզվի ուսուցիչ։ Ունի հայագիտությանը նվիրված
բազմաթիվ ուսումնասիրություններ, հոդվածներ, որոնք տպագրվել են ժամանակի հայ և ռուս
պարբերականներում՝ սկսած 1890—1915 թթ. ինչպես «Բազմավեպ»-ում, «Արձագանք»-ում,
«Русская мысль»-ում։ Առանձին գրքերից հայտնի է՝ «Նդիշեի պատմություն Վարդանանց ըստ
Անձևացյաց օրինակի», 1892, Մոսկվա և այլն։ Կատարել է մի շարք թարգմանություններ։

9. Խոսքը վերաբերում է Խ. Հովհաննիսյանի նիկոլսկուց թարգմանած գրքին՝ «Клинообразные надписи Закавказья» (арм. пер. в журн. «Базмавеп», Վենետիկ, 1897):

10. Խոսքը վերաբերում է Մովսես Խորենացու «Պատմություն հայոց» գրքի Խորեն Ստեփաննի թարգմանությանը:

11. Խոսքը վերաբերում է Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմություն հայոց» գրքին:

12. Դալուստ Տեր-Մկրտչյան (1860—1918),— հայագետ, բանասեր, հոգևորական, հեղինակ մի շարք արժեքավոր ուսումնասիրությունների:

13. Շտակելիերգ Ռոման, Հազարյան ճեմարանի մասնագիտական դասարանի պարսից լեզվի պրոֆեսոր:

14. Նամակն ուղղված է Լեոյին (Առաքել Բաբախանյան, 1860—1932).— պատմաբան, գրականագետ, հրապարակախոս: 1919 թ. խմբագրել է «Մշակ» լրագիրը: Գրել է պատմական և բանասիրական բազմաթիվ աշխատություններ, ինչպես նաև «Հայոց պատմություն» (3 հատոր), «Գրիգոր Արծրունի» (3 հատոր), «Հայ ազգագրության պատմություն» (2 հատոր), «Ռուսահայ գրականության պատմություն» և այլն: Գրել է նաև գեղարվեստական երկեր՝ «Մելիքի աղջիկը» վեպը և այլ անտիպ գործեր:

15. Մառն Անիում պեղումներ կատարելիս իր հետ վերցրել է լուսանկարիչ Ա. Վրույրին, վերջինս լուսանկարել է հնությունների նկարները մոզական լապտերով գիտելու համար: Նկարների մեկ կոմպլեկտը պահվում է Գրականության և արվեստի թանգարանում: Հավանաբար խոսքը վերաբերում է այդ նկարներին:

16. Նամակն ուղղված է բանասեր, մանկավարժ Ե. Շահադիդին (1856—1951):

17. Նոր Նախիջևանի հասարակության ցանկությանմբ և հանձնարարականով, Ե. Շահադիդը հատուկ նամակով Մառին հրավիրում է Նոր Նախիջևան՝ Անիի պեղումների մասին դասախոսություններ կարդալու: Մառի Նախիջևան գալու առթիվ Ե. Շահադիդը ընդարձակ հուշեր ունի գրած, հարուստ և հետաքրքրական փաստերով:

18. Նամակն ուղղված է Առաքել Բաբախանյանին (Լեոյին):

19. Արամյան Միսաք (1845—1909)— բժիշկ, հասարակական գործիչ, ծնվել է Պոլսում՝ դերձակի ընտանիքում: 1859 թ. եկել է Թիֆլիս և սովորել Ներսիսյան դպրոցում: Ավարտել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Երկար տարիներ աշխատել է Սալյանում որպես բժիշկ: Աշխատակցել է Ժամանակի պարբերական մամուլին: Ունի մի քանի ուսումնասիրություններ:

ИЗ НЕОПУБЛИКОВАННЫХ ПИСЕМ Н. Я. МАРРА

П. Е. СИМОНЯН

(Р е з ю м е)

Академик Марр поддерживал тесную связь со многими армянскими учеными (Г. Халатян, А. Еремян, Лео, Е. Шахазиз и др.). В музее литературы и искусства Армянской ССР хранится более 100 писем Марра, адресованных современникам-армянистам. Здесь публикуется часть из этих писем, относящихся к 1892—1910 гг. и затрагивающих различные вопросы истории, литературы и языка армянского народа.